Փրոֆ. Յակոբ Անասեանը իր մտաւուն աշխատանքներուն մէջ Մատենադարանի ներսի սենեակներէն մէկուն մէջ: Չէր մոռցած զիս առաջնորդել դէպքի այդ սեղանը, եւ անօրինակ համեստութեամբ, բայց լռելիանայ ազադակով կարծես ըսել ուզած էր ինձի. ահապահի հոս է որ կ'աշխատում ես, հոս է որ կը կարգամ, հոս է, մշակութի ճառագայթներով ողջուն այս սենեակին մէջ է որ ես կը ծծեմ լոյսը եւ գայն կը փոխանցեմ ուրիշներուն:

Ուխտավայր մըն էր այդ, ուրկէ ներս


մտած էի սոքերս սրբելով, գլխարկս հանելով: Ականջներս սրած էի, որպէսզի լսեմ դարեւու խորքէն եկող շուրջ: Եւ աչքերս վերածած էի մէկմէկ լուսանկարի գործիքի, որպէսզի անոնց միջոցաւ արձանագրեմ սա տեսարանը, որ իմ մեծ երազներէս մէկուն իրականացումն էր իրականացումն էր ան իսկապէս: Ես որ այդքան շատ գերբեմբով շրջապատուած ըլլալով հանդերձ, ամբողջ կենտրոն մէջ ապրած էի եւ դեռ ալ պիտի ապրէի դրբեկարօտով, կը դրայի որ այդ պահուն կը գտնուէի այն կէտին վրայ, որ ինձի համար մէկ հատ էր ամբողջ կեանքի անտիկոնս կ'արեւոտէր իր ընկալելի: Երբ դէպքէն մէկ կողմ կը նայէի, միւս կողմէն կը փայտնէի: Երբ Յակոբ Անասեանի մէկ նախադասութիւնը կ'արձանագրէի մտքիս մէջ, միւս նախադասութիւնը կը փայտնէի: Ատիկա խոճարկ մը կը ստեղծէր հոգիիս խորքէ: Կը վախնայի, որ, մինչեւ հոս զայն վերջ, իրականացնելէ վերջ տարիներու երազս, հոսկէ պիտի մեկնէի առանց յազեցում գտնելու, առանց լիառատ ըմպելու, առանց բուսականաշափ լուսաւորուելու...:

Այդպէս ալ երբ: Եւ ես կենտրոն մէջ անդամ մը ես հաստատեցի, որ ոչ մէկ երազ լրիւ կրնայ իրականանալ, ոչ մէկ երազ կրնայ լրիւ յազեցնել մարդու տարիներու պատկեր: Որովհետեւ երազին կրկանացումն իսկ վարանցուկ է, պահ մը միայն կը լուսարեւ մարդու հոգին յետոյ գարձալ իր տեղը կը թողու երազին: Միայն երազին ձենէ է որ կը փոխւի: Նախկինը՝ սենեակու երազն էր: Երկրորդը՝ երազն էր գարձալ միասին ըլլալու:

Յակոբ Անասեանը ալ գնաց այս աշխարհէն: Եւ ի՞նչ մեղք որ ան այս աշխարհէն մեկնեցաւ ո՞չ թէ Երևանի երկրներէն ներքեւ, այլ Գալիֆորնիոյ արեւմտեան սահմանի: Բախտը այդպէս անձարակ չէր իրեն: Ես գիտեմ թէ ան Գալիֆորնիոյ հարաւ հատ արեւը չէր փոխեր իր Մատենադարանի սենեակին աշխատանքներին հետ: Ես գիտեմ որ ան ալ օր մը դատապարտուեցաւ լքելու իրականը, եւ ինքզինք յանձնեց երազին: Ան ալ լքեց կեղծումի կէտը, եւ գնաց ապրելու անձարակ շրջանակներու մէջ, որոնք անվերջ իրենց կեղծումին մօտենալ կը փորձեն:

Իր մահուն լուրը, այս, լար մը կը փրցնէ հոգիիս խորք եւ կենտրոնս ըստ մը կ'առնէ կը տանի:

Օտար հոգը թեթեւ գայ իրեն:



ԼՈՍ ԱՆՃԷԼՍԻՍ իր այցելութեան ընթացքին Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Ժ. Վանուրիի հետ հանդիպում մը ունեցած է Ռաֆայելը Աղատական Կուսակցութեան ութ հոգիներու պատուիրակութիւն մը, Օգոստոս 7-ին, Կիրակի օր: Պատուիրակութեան անդամները երախտագիրութիւն յայտնած են Վասիլիուի, կիպրոսայ դադուրի ցոյց տրուած քաղաքներու համար: Նախագահն ալ իր կարգին յայտնած է թէ ազգային ամէն խմբուտումը քաղաքակիրթութեան ունի իր ազգային դիմագիծը պահպանելու: Ան հետաքրքրուած է նաեւ Միտիայի Նահանգները ապրող նախկին Մեղրեաններէն: Հանդիպումին ներկայ եղած է Կիպրոսի Լոս Անճելոսի հիւպատոսը:

ՄԵՐ ԲՆԻԿ, ՀԱՅԵՑԻ ԿԱՊԱՆԸ

Յայտնի է որ այսօր միութենական բոլոր Հանրապետութիւններում հսկայական գործ է արուամ բնակավայրերի պատմական անուանումները վերականգնելու ուղղութեամբ: Այդ աշխատանքի անհրաժեշտութեան մասին միութենական մամուլում հրատարակել են ոչ քիչ թւով յոգուածներ, խօսուել է ամենապատասխանատու ամպիտոններէր, հանդէս են եկել բարձրատիման գեղավոր աշխատողներ, հեղինակաւոր գիտնականներ, գրողներ, լրագրողներ:

Մեղանում այդ գործը սկսուել է Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման ժամանակներից ի վեր եւ քիչ բան չի արուել: Փոխուել են Հանրապետութեան բազմաթիւ շրջանների, քաղաքների, բանասանիների, գիւղերի անուանումներ: Դրանցից ոմանց վերագրուել են պատմական անունները, իսկ ոմանք էլ իրենցով յաւերճացնում են կուսակցութեան ու պետութեան, գիտութեան ու գրականութեան, արուեստի ու մշակութի երախտաւորների յիշատակը: Այսպէս, ապատակիչ թուրք - սելջուկների «յիշատակը յաւերճացնող» Ջալալովին գարձաւ Մոտեհանաւան, Բասարգեշարը՝ Վարդենիս, Արտուրի Հրազդան, Վերին Դամարունը՝ Արտաշատ, Երեւին Գարգանարանը՝ Իջևան, Բէշլիքէնդը՝ Եղեգնաձոր... Մեր շատ քաղաքների քնակելի գանդուածներ, թաղամասեր, փողոցներ, ինչպէս նաեւ գիւղեր, արդարացիորէն այսօր կրում են մեղանցից դատարկուած մեր պատմական հայրենիքի անունները (Գուլիս, Անի, Զէյթուն, Արարիկը, Մարբերդ, Մուսալիս, Մասուն...), սերունդների յիշուելիքը պաշտպանելով ժամանակների այն քայքայիչ ժանգից, որի անունն է մոռացութիւն:

Ես չեմ ուզում դատողութիւններ անել արուելու կարելութեան մասին, բայց եւ աւելորդ չեմ համարում ընդգծել, որ այդ յիշուելի պետական նշանակութեան գործ է յատկապէս մեր սրտաչափ Հանրապետութեան համար, քանի որ վեց դար շարունակ «պետ ու պետութիւն»-ից զրկուած մեր ժողովրդին զարմանալի տխուր մի ժառանգութիւն էր մնացել իր պատմութիւնից, եւ, եթէ նա շարունակէր ապրել իր երկիրը սասպատակաձ առաջադարձայն ցեղերի կողմից իր վրին փաթաթուած անունները հոլովելով, կը նշանակէր որ անարգում էր իր հայրենիքը: Եւ եթէ այս օր էլ Հանրապետութիւնում քիչ գործ չի արուում, որպէսզի նորաստեղծ շրջաններն ունենան հայեցի անուանումներ (եւ նկատի ունեն մեր վերջին տարիներին ստեղծուած Բաղրամեանի, Մաշտոցի եւ Շիրակի շրջանները), ապա, թուում է թէ մի տեսակ աչքաթող է արուած գործածութեան մէջ գտնուող տեղանունների իմաստաւորման հարցը:

Ոտքս ուզում եմ հաստատել Ղափան անունը կրող իմ հայրենի շրջանի եւ նրա վարչական կենտրոնի օրինակով, թէպէտ օրինակներ շատ կարելի է բերել (Շամշադին, Այսպիզդի եւլն...):

Եւ իսկապէս, ինչո՞ւ Ղափան:

Զէ՛ որ Մեծ Հայքի Սիւնիք նահանգի Չորք գաւառում, Ողջի (Կապան) գետի ձախ ափին, Ե. զարից ի վեր մեր պատմութեան մէջ յիշատակուած է Կապան գիւղը, հարաւից պաշտպանուած Արեւիքի անմատչելի լեւներով, հիւսիսից՝ Կապան գետի անդնդախոր կիրճով, արեւելքից՝ ամբողջ պարիսպներով, հիւսիս-արեւմուտքից՝ Բազակու - քարվանք - բերդով եւ արեւմուտքից՝ Բազարբերդ ամրացով:

Զէ՛ որ թ. - Ժ. զարերում աննախընթաց զարգացման հասած ու հզորացած Կապան բերդաքաղաքը եղել է Սիւնիքի իշխանապետը եւ Սիւնիք քաղաքաւորութեան մայրաքաղաքը՝ իր պետական կազմով ու գործակալութիւններով, բանակով ու դատարանով, իր իմաստասէրներով ու երաժիշտներով, վարդապետներով ու վարչապետներով, արհեստներով ու արհեստագործներով, իր շինարարական արդիւնահասնութեամբ ու լեռնագործութեամբ (որը շարունակուած է մինչեւ օրս), իր փողոցներով ու Զհատաթաղ եւ Ռնճորոյ գլուխ թաղամասերով, իր այսօր վերականգնուող աւելի քան հա-

զարմեայ փառահեղ վահանակներով եւ միւս կրթմանական զանգեղանքով:

Եղել է մեր ժողովրդի պատմութեան մէջ բազում հերոսական էջեր գրած բազմաշաղկապ Կապանը, սակայն եկել են Չորթմանն ու Ամիր - Հասանը, Ոսկի Հորդայի թողթամիշ խանի զօրքերն ու Լենկիթիմուրի հրոսակները, քարադրոնականներն ու ազդոյունուկները, Պարսիկներն ու Օսմանները, եկել ու աւերել են երկիրն իր մայրաքաղաքով, տեղահանել աշխատաւոր ժողովրդին իր հայրենի բնօրրանից, գործէթարդ ազդուակների ու կրթմանական կենտրոնների վերածել սխտանների, լեռնադադաթներին ծուարած զղեակներն ու օթոցները՝ մահապանոցներ: Վայելել մեր արտ ու աշխիւների քերքն ու բարիքը, իրենց ծառայող յազեցրել արեւնով ու արջունքով:

Ըստ երեւոյթի, քոչուր - վրանարանակները լաւ գիտէին երկրի տեղադրուելու, պատմութիւնը ջնջելու բոլոր միջոցները: Եւ ահա նրանք անուններ գրին մեր շէնքերն ու ազարակներն, սուրբերն ու ձորերն, անտառներն ու արբիւրներն՝ ճիշդ եւ ճիշդ այնպէս, ինչպէս զաւրուել են այսօր էլ արուած է թուրքալոյս: Իսկ երբ իսկըքը չի հասել, երբ սպառուել է բոսնապարսը, պարզապէս ազուագել են դարձրով ժողովրդի մէջ արժատաւորուած հայախարհիկ անգանունները, արտաբերելով դրանք այնպէս, ինչպէս տաւազարում է իրենց լեզուներով:

Ահա այդպէս էլ, ինչ-որ վաչկատուն «սեւ» կամ «սպիտակ ոչխար» (ինչպէս իրենք են իրենց անուանել), հրճուելով ծխացող աւերակների տեղով, «թաթթու» թմբիւնայր ծուխ ու միջց սեւացած զէմքին, ինչ-որ մի օր արհամարհանքով շարունակ է Ղափանը, Ղափան... Եւ այսպէս մնացել է անհետն ու անմաստ այս տաւաղապանութիւնը: Եւ այսպէս մոռացուել է հրաշալի, հասշուուն Կապանը, որ այնպէս սազում է անյատակ կիրճերով ահիսատուած մեր վեհաշուք լեռնաշխարհի կնճառ ճախարանը:

Բայց կայ նաեւ հարցի միւս կողմը:

Եւ չգիտեմ եւ ո՞վ կարող է աւել, թէ առաջին անգամ Ղափանը թ՛րք է տաւարագործուել ուսերէն, բայց որ այն տաւարագործել է բառիս բուն իմաստով ուսերէն չիմացողը, համոզուած եմ հաստատապէս:

Իրօք, այդ ո՞ր ուսագէտը Փափագանը կը տաւարագործէր Փափագան, եւ ոչ թէ Պապագան, Փարսուան՝ Փարսան, եւ ոչ թէ Պարսան, Փիրաւանի՛ն՝ Փիրաւանի, եւ ոչ թէ Պիրաւանի, Ղափանը՝ Կափան, եւ ոչ թէ Կապան... Ուրեմն, ազուագուած է նոյնիսկ ազուագուած Ղափանի ուսերէն տաւարագործութիւնը եւ ճիշդ տաւարագործելու զէպքում տրվել իսկ կ'ունենանք քաղաքի պատմական անունները՝ Կապան: Եւ ուրեմն, համարուած գրագիրութեան մեր զարում պարզապէս անյետաձգելի անհրաժեշտութիւն է շտկել գաւառական անդրադատութեան հետեւանքը՝ յանուն մեր պատմութեան ու մշակութի հանդէպ յարգանքի:

Ղափանի շրջանը եւ նրա վարչական կենտրոնը վերանունանելու մասին, բազմաթիւ քաղաքայինների, այդ թւում եւ մեր առաջադրութեամբ, համապատասխան որոշումներ են ընդունել ժողովրդական երեսփոխանները շրջանային եւ քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեները: Անցել է գրեթէ մէկ տարի: Գուցէ եւ այս յոգուածի անհրաժեշտութիւնը չլինէր, եթէ խորհուրդները գնային իրենց ընդունած որոշումների յետեւից, եթէ դրանք չմտային թղթի վրայ:

Հարցը, թուում է, պարզից էլ պարզ է:

1988 թուականի Հոկտեմբերին լրատում է մեր հին ու նորեայն ուսանիք քաղաքի կողմէն շտրջելու յետաձգելու վաղուայ Կապանցիները հաստատում են, որ իրենց քաղաքը այդ յորեկանը կը տանի տակալին չկառուցուած իր քաղաքի կերտ մուտքի վրայ քանդակուած կապան անունով:

ԳԱՂԱՒՈՒԹՆ ԳԱՂԱՒՈՒԹ  
Ղափանի շրջանային  
Երեսփոխան

ՇԱՐԺԱՆԿԱՐ

« ԳՐԻՍՏՈՍԻ »  
ՎԵՐՁԻՆ ՓՈՐՉՈՒԹԻՒՆԸ,  
ԿԱՄ՝  
ՕԳՏՈՒՄ ԲԱՆԱՎԷՃ ՄԸ

Մարթին Աբրահամյանի Ֆիլմը՝ «Գրիստոսի վերջին փորձությունը» քաղցած նիքոս Գաղամազիսի վեպի վրա շարունակ արված լուսանկարների և ինչպես միջոցումն պարզապես մեկը, առաջին անգամ կը ծառայի ձրի Ծանուցումի Ֆիլմին տարածման համար:

1983ին սկսած է այս «վրդովեցնող» Ֆիլմին պատմությունը, երբ բեմադրվեց և ծրարվեց զայն զարմանել, բայց Փարսմունտի մեղի կու տար ճնշումներու ու կը հրաժարել իրազորումնին: Այլ թըւակնան է մինչև 1987, Սթրանկը նիւթականը կը վնասէր Ամերիկայ թէ Եւրոպա: Ի վերջոյ, Եւրոպայի և Սիւնիկի Օսման կը յօժարին արտադրությունը և ցրումը ապահովել: 1987 Նոյեմբերին բեմադրվեց և կը փառաբանուի Մարթին Ֆիլմը, Ռեյնոլդ Տաֆու Յիտուի դերը կը ստանձնէ և Պարպուսը հըրը՝ Մարթին - Մայրամ Փարթապիանցի: 1988 Յունուարին արտադրող ընկերությունը մէկը կը բռնէ՝ Թիմ Փեյնին, որ կապի ունի կրօնական պահպանողական շրջանակներուն հետ: Յուլիս 12-ին ստատուր, Լոս - Անճըլիս մէլ, մամուլի ստուկի մը ընթացքին, ըզոքական պատուելիներու խումբ մը կը սպանայ պոլսթի արշալի մը դիմելի էՄ - Սէ - Ա-ի դէմ, եթէ իր մասնաճիղը՝ Եւրոպայի քաղաքի Ֆիլմը հրապարակ հանել, Սեպ. 23-ին, ինչպէս նախատեսուած է: Եւրոպայի զյուսին է Թիմ Փեյնին, որ կողմ փոխած է: Ֆիլմը չեն տեսած, բայց կրտսեր թէ հոն Յիտու կը ներկայացուի որպէս «մտային խնդրումի տէր մէկը, որ կ'առաջնորդուի վաւարտութեամբ» և կը համոզի Պրոտոսը դիմը դաւաճանելու: Նոյն օրուսն կէսօրէ յետոյ, Ֆիլմը կը ներկայացուի Նիւ - Եորք երեսնակ մը կը րօնակներու: Ֆունտամենթալիստները կը մերժեն հրաւերը: Պատճառարանութիւնը պարզ է՝ Բոկային փորձելու պէտք չկայ, գիտնալու համար որ թոյն մըն է:

Յուլիս 14-ին, առաջին հակազդեցությունները նպատակաւ են: Վատարկուի միայն, որ կարգ մը տեսարաններ կը րանան բանալիէ ստեղծել, մասնաւոր այն տեսարանը, ուր Քրիստոս վերջին անգամ մը փորձութեան կ'ենթարկուի սառանակին, կ'երեսակայ և որ խաչին վար

կ'անուսի իր պահպանողական հրեշտակին կողմէ, կ'ամուսնանայ Մարթին - Մայրամ-ը ինչպէս հետ, կը սիրարանի հետը և սեւէ մահանացուի կ'անք կը վարէ յառաջացուող տարիքի մէջ, երախտներովը շրջապատուած:

Ընդգրկումները չի դառըր սակայն: Պատուելի մը կ'առաջարկէ Եւրոպայի քաղաքներէ հատուցանելի Ֆիլմին ծախքը մեկաթիֆին փոխարէն: Ընկերություններ էլ մը գրաւող բաց նամակով մը, հրատարակուած չորս թերթերու մէջ, կը մերժէ, յիշեցնելով թէ ամերիկեան Սահմանադրութեան Ա. յօդուածը կ'երաջարտուի մտածումի և արտայայտութեան ազատութիւնը:

Ֆունտամենթալիստները կը շարունակեն ցոյցերը, Լեւ Ուսարմանի ընակարանին առջև: Ան նախագահն է արտադրել ընկերութեան: Բողոքը կը շեշտէ ընկերութեան հրեշտակ ինքնութիւնը և բանալիէ հակահրեշտակ ընդդէմ կ'անուս: Կը ներկայացուի արխանջալ Յիտու մը խաչ մը կրած ու կողբին «գործի մարդ» մը, (Ֆիլմ արտադրող մը...), ձեռքը խարզան մը:

Անդին, Եւրոպայի զյուսը կ'անցնի կաթոլիկ խումբերու և որոնց նպատակն է արգելք հանդիսանալ որ Ֆիլմը ներկայացուի Վենետիկի փառատօնին: Ինք՝ խալայցի բեմադրի կը սպառնայ զաչել իր վերջին ժապաւէնը՝ «Երիտաւոր Քոստանթին» եթէ փառատօնի յամար կ'անցնի Քրիստոսի փորձությունը: Ինք կը յայտարարէ որ իր դերը կ'ապ չունի արտայայտութեան ազատութեան հետ, այլ պարզապէս՝ ճաշակի: «Իմ ըսածս այն է, որ զրամ շահելու համար, ոչ ոք պէտք է նախաձեռնարարուի: Ֆիլմը յատկապէս շնորհած է բանալիէ ստեղծելու համար: Գոհելի և լիակալ Ֆիլմ մը, որ կը նախաձեռնարարութեան ամէնէն կարեւոր անձնաւորութիւնը»: Յետագային, ի պատասխան իրեն դէմ եղած յարձակումներուն, կ'ընդունի որ «քրիստոնէայ արժեքներուն համար նախատեսուած անարգական» որակած էր Ֆիլմը, բայց կ'որոշուի որեւէ հակահրեշտակ զրացում:

Բանալիէ քերթումով սուր ընդդէմ կ'անուս, Եւրոպայի «ցեղապաշտ» կը նկատուի, ինք կը պատասխանէ որ նման խօսքեր արհամարհելի են:

Օգոս. 12-ին Ֆիլմը կը ցոյցադրուի Նիւ - Եորք: Քրիստոնէութեան հակազդեցություններ խառն է, հարկը նպատակաւ կարելի է նկատել մեծամասնութեան մը կողմէ: Հանրութեան ընդունելությունը շատ խանդավառ է, երկար պղծեր սըրահներուն առջև, Նիւ - Եորքին Սան - Պրանսիսքօ, Լոս - Անճըլիս, Շիքագօ... Ճիշդ է որ հարկ եղած «ժամանցումը» եղած էր և ոչինչ աւելի կրնայ նպատակ Ֆիլմի մը տարածման քան նման բանալիէ, ուր շեշտը կը դրուի զայն թակղեցուցիչ ընդդէմ վրայ Ֆիլմին,

ԱՆՅԵԱԼԸ ՆԵՐԿԱՅՑԱԾՆԻ  
ԻՆՔԻՆԱՎԵՆԱՍԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ  
Պատերազմին չմասնակցելու պատճառով տարիքային (միայն երկրորդ կուրսի վերջում գիւնդական գրքով ստացայ) և որովհետեւ երրորդ կուրսը փաստօրէն վերջին կուրսն էր (4-րդ-5-րդ կուրսերը միանգամայն աւարտեցին ու բնակ տարան), ապա, ըստ դրոժող օրէնքի, մեր կուրսիցի պահեստային եղան մինչև պատերազմի վերջը: Իմ փոխարէն ՏՕՏ-ում հայր էր բանակում:  
Ինչ տարիներ էին: Եւրոպական լամպի ալյուրին անցած հաւասար էր հարկ վերջի կորցնելուն, որովհետեւ նոր լամպի մարկի համարեալ թէ անհասարկ էր (տղաներից մէկին, որ չուտով գիտութիւնների գոկտոր է դառնալու, համարարանից հեռացրեցին՝ արտաքննիչի մի լամպ «գողանալու» համար): Արտաքննիչ էր: Թէ մենք ինչպէ՞ս չմեղանք սովորում թոքախտից: Բայց չմեղանք: Ասիւն. ցունցից նոր հիւթերով, նոր

ըմբռնողութեամբ, նոր սիրով ու ստեղծութեամբ...

Ես սիրում եմ լաւ ձեռագիրը, ինչպէս այլոք սիրում են լաւ հագուստ կամ դեղեցիկ իրեր: Ու եթէ շատերն են կողեկցիտներութիւն անում, ապա իմ «կողեկցիտներութիւնն» էլ դրսեւորում է գեղեցիկ գրեր ընդօրինակելու մէջ: Ու մի գասնակեր ունէի, որի «ե»ն շատ հաւանում էի և ջանում ընդօրինակելով իւրացնել: Հանրակացարանային սեզանի սիրոցը (այն էլ պատերազմի տարիներին) չէր վարող լինել այլ բան, քան լըրապիլը: Յիշում եմ, որ այդ «սիրոց»ի վրայ ես անվերջ վարժում էի «ե» գրելուն: Յետոյ չեմ յիշում ոչինչ, կարծես քունս տարած լինէր: Իսկ երբ «արթնացայ», բանին պարզուց, որ լրագրի մտող էլ չեմ մէկը գրուել է մի-տէր Աստուած - բանաստեղծութիւն: Այսպէս ես համարյա երգանազանց եղայ (չէ՞ որ երգուել էի ոտանաւոր չըրել), բայց գործած «մեծ մեղքը» ինք ինձ ներքի, երբ կարդայով գրածս տեսայ, որ «ե»ով ըսկրուող այդ ոտանաւորը այլևս ոտանաւոր չէ, այլ բանաստեղծութիւն:  
Նշանաւոր 1942-ին էր զա՛ս այն թուականին, երբ թեկում սկսուց պատերազմի մէջ: Իմ սեփական թեկումն էլ կատարուեց նոյն թուականին:  
Առաջին լուրջ բանաստեղծութիւնս, որ անտիպ է, ինչպէս այդ տարիներին գրած իմ համարեալ ըզոր բանաստեղծութիւնները հէնց այդպէս էլ կողում է՝ «Լինելի վրայից»: Ես գիտակցութեամբ որոշել էի «լինելի»: Իմ «ե»ի տակ գտնուող «ե»ը վճռել էր «լինելի»...  
Նոյն թուականին էլ գրական մասագրում խմբագրվեց յանդեպ տպել իմ առաջին բանաստեղծութիւնները: Ասում եմ «յանդեպ», որովհետեւ կեանքը չուշացաւ սակայնցելու, որ զա ինչպիսիս յանդեպութիւն էր այդ օրերին: Սօքրատի լինելը հեռուցուց (նաեւ այդ պատճառով), իսկ ինձ գործընդհանրի մի... քայլով կատարան, որ գործընդհանր էր իր վրայից կախ տրուած թաղամիւս «իզմ»ների դանդաղակները: Հիմա, մտովին վերադառնալով այդ օրերը, աւելի պարզ եմ տեսնում իմ մեղքը, որ մտանում էր յանդեպ լինելուց: Ես բաց զոնք չէի ծեծել, ուստի եւ իմ ձակասին շրխկացին բոլոր բաց դռները եւ բանը վերջացաւ այնպէս, ինչպէս աւարտում է յիշածս «Լինելի վրայից» բանաստեղծութիւնը: «Իհր սկիզբը չունեցած ունեցաւ վերջը»: Այլևս տպագրի ոչ մի տող՝ մինչև 1948 թուականը:  
Հին Եզրայտում մի սովորով է եղել սանգրալ ներքանին նկարում էին թշնամուն, այսպիսով ամէն օր կոխկրտում էին նրա արժանապատուութիւնը: Սանգրալ ամէն օր կարող է ունենալ բայց ամէն մի արժանապատուութիւն գետնին չի փուլում, որ կոխկրտուի: Արժանապատուութեան կողբին էլ դեռ այնքան

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ԵՆՈՒՄԹԻՆ (Թէքսաս) մէջ Յուլիս 8ին բացուած է ՀՕՄ-ի Արեւմտեան Ամերիկայի ետօրէն պատգամաւորական ժողովը, որուն մասնակցած են 33 պատգամաւորներ: Երջ. վարչութեան ատենակազմի Սոնա Ծընտըրեան յայտնած է թէ իրականացած է Միութեան սեփական տան ծրագրերը: զնուած է շէնք մը որ պիտի վերածուի կեդրոնի: Ընտրություններէ ու տարեկան տեղեկագրերու ներկայացումէն ետք տեղի ունեցած է հաւաքոյթ - ճաշ մը:  
\*  
ԿԼԻՆԻՑԻՑԻՆ մէլ Յուլիս 14-ի երեկոյեան Ամերիկահայ միջնորդային Գոլֆֆի հովանաւորութեամբ ու «Նաւասարդ» ամսաթերթին կազմակերպութեամբ տեղի ունեցած է գրական հանդիպում մը Անահիտ Չարեցիի հետ: Գոլֆֆի ստորէն կարգին Տէր Եղիա յայտնի բացման խօսքէն ետք բեմ հրաւիրուած է Ա. Չարեց որ յայտնած է թէ առաջին անգամ արտասահման կը գտնուի, ջանի որ ելքի արտօնութիւն կը մերժուէր իրեն Չարեցիի գուաղը ըլլալուն համար: Ան յուզումով, երկարօրէն արտայայտուած է Տորք մասին ըսելով թէ քր պատմութիւնը Չարեցիի պատմութիւնն է, իսկ Չարեցիի պատմութիւնը՝ հայ ժողովուրդի պատմութիւնը: Երկար սեղագրարձած է Չարեցիի տանականներով հոգին տակ մընացած բանաստեղծութիւններուն, ստալինեան վարչաձեւը քննադատող դրօժերուն մասին: Ստեղծվում էր զարբարակեան հարցով ծնունդ տուած պոեթիկումին ու

ժողովրդական պահանջատրութեան մասին, ան ներկայից հազորդ զարձուցած է երեւանի ու Ստեփանակերտի վճարակաւ մութեան, ներկայից պահանջելով որ զօրավար կանգնին հայրենի ժողովուրդին:  
\*  
ՍԱՆ ՅՐԱՆՍԻՍԻՒԳՈՅԻ «Գուցեան - Զարեան» նախարկարանի ու «Վասպուրական» միջնակարգի ամսագրերի հանդէսը տեղի ունեցած է Յունիս 19-ին. տնօրէնուհի Արսինէ Օչական բացման իր խօսքով «տարիներու երազի մը իրականացումը» նկատած է հայկ. ամէնօրեայ դպրոցի մը ներկայութիւնը: Աշակերտներու արտասանութիւններէն ու երգերէն ետք ըստի բանը արտասանած է Տաթև Ա. քննչ. Գալուսեան: Գալիֆորնիոյ նահանգապետին նամակին ընթերցումէն, դպրոցին ուսումնական խորհուրդին ու եկեղեցւոյ հոգաբարձութեան երկու խօսքէն ետք կատարուած է հինգ շրջանաւարտներու վկայականներուն բաշխումը:  
\*  
ԱՄԵՐԻԿԱՅԻ Հայկական համալուծարար մեծարարի ճաշ մը կազմակերպուած է Օգոս. 5-ին, ի պատիւ Էս. Ճէրֆեմանի, որ վերջերս Սուրիոյ դեսպան նշանակուած է նախագահ Ռեյլանի կողմէ: Ծաղին մասնակցած են գլուպոսականական, արտաքին նախարարութեան և հայկական շրջանակներէ շուրջ 150 հոգի: Էս. Ճէրֆեմանի ընտանիքը Հայկական Միացեալ Նահանգները գաղթած է:

և պարզ է որ ժողովուրդը դեռ ծարարի է ապարարոյ, անբարոյական և մանուանող դաջթակցուցիչ բաներու: Հետաքրքրական է նկատել նաեւ թէ ինչ բանաձեւերով կարելի է գտնել այն մօտեցումները ունենալու համար: Օրինակ՝ զանաւորի լրագրող մը կը գրէ. «Լուրջ հետախուզութիւն մըն է, քաջ Ֆիլմ մը...»: Նիւ - Եորքի կարգ մը օրաթերթերը վերապահութիւն կը յայտնեն ինչ կը վերաբերի երկարութեան (2 ժամ 40 վրայեքան), զրոյցներուն՝ ամէնօրեայ և ժամանակակից և արեան մշտական ներկայութեան: «Նիւ-Եորք Փոսթը» «գեղարարական գետնի վրայ նախատեսվում կը գտնէ Քրիստոսի մերկութիւնը խաչին վրայ, բայց ոչ՝ «անպայման անձիզ պատմական տեսակետով»:  
Իսկ ինչ է Քաղանձաքիսի մօտեցումը: Ան, 1954-ին, սակայն կը նախարանէր իր գիրքը. « Քրիստոսի կրկնակ խաչութիւնը ինձի համար միշտ խոր և անթափանցելի խորհուրդ մը եղած է. մարդոց

կրթոց փափաքը, այնքան մարդկային, այնքան դերմարդկային հասնելու մինչև Աստուած -աւելի ճիշդ վերադառնալ Աստուծոյ և նոյնանալ իրեն հետ: Այս կարօքը, միաժամանակ այնքան խորհրդաւոր և այնքան իրական, մէջս վէրքեր կը բանար, լայն վէրքեր»:  
Կրեւոցի է, կարեւոր է: Ամէն ինչ գինքը կը հրապարէ: Հոն է, կ'ըսեն որ ծնաւ Զեւս, բայց հոն է նաեւ որ հին Եւրոպան կը թէքի զեպէ Ասիա: «Կրեւոցի նամակ»ն մէջ, որ կ'ենկարդ մը տեսակ մը հաշուեկշիտն է, կը վերադառնայ իր ոգեկան ուղիին և իր առաջնորդներուն՝ Քրիստոս, Պուտոս, Լեւին, Ուրիսեսս:  
Վերջացնել առաջ, չմոռնալ յիշելու որ այս ամբողջ բանալիէ շատ հաստիքաւոր եղած է Ֆիլմը արտադրողներուն, որոնք շնորհիւ ամերիկացի Ֆունտամենթալիստներուն ձրի ծանուցումին, երեք օրուսն մէջ 400 հազար տոլար շահած են:  
Թ. Ա. Թ.

նրբ. հէնց այդպէս էլ կողում է՝ «Լինելի վրայից»: Ես գիտակցութեամբ որոշել էի «լինելի»: Իմ «ե»ի տակ գտնուող «ե»ը վճռել էր «լինելի»...  
Նոյն թուականին էլ գրական մասագրում խմբագրվեց յանդեպ տպել իմ առաջին բանաստեղծութիւնները: Ասում եմ «յանդեպ», որովհետեւ կեանքը չուշացաւ սակայնցելու, որ զա ինչպիսիս յանդեպութիւն էր այդ օրերին: Սօքրատի լինելը հեռուցուց (նաեւ այդ պատճառով), իսկ ինձ գործընդհանրի մի... քայլով կատարան, որ գործընդհանր էր իր վրայից կախ տրուած թաղամիւս «իզմ»ների դանդաղակները: Հիմա, մտովին վերադառնալով այդ օրերը, աւելի պարզ եմ տեսնում իմ մեղքը, որ մտանում էր յանդեպ լինելուց: Ես բաց զոնք չէի ծեծել, ուստի եւ իմ ձակասին շրխկացին բոլոր բաց դռները եւ բանը վերջացաւ այնպէս, ինչպէս աւարտում է յիշածս «Լինելի վրայից» բանաստեղծութիւնը: «Իհր սկիզբը չունեցած ունեցաւ վերջը»: Այլևս տպագրի ոչ մի տող՝ մինչև 1948 թուականը:  
Հին Եզրայտում մի սովորով է եղել սանգրալ ներքանին նկարում էին թշնամուն, այսպիսով ամէն օր կոխկրտում էին նրա արժանապատուութիւնը: Սանգրալ ամէն օր կարող է ունենալ բայց ամէն մի արժանապատուութիւն գետնին չի փուլում, որ կոխկրտուի: Արժանապատուութեան կողբին էլ դեռ այնքան

չատ բան կար անելու, որ տպագրուելու կամ «իզմ»երից սպառագրուելու մասին մտածելու ժամանակ չկար: Աւարտեցի համալսարանը: Ընդունուեցի սակարանատուրա՝ Հայոց հին և միջնադարեան զբոսկանութեան մասնագիտութեամբ: Վերջացել էր արևմտ պատերազմը, բայց միայն պատերազմական վէրքերը չէին, որ միտում էին. բացում էին նորանոր վէրքեր...  
...Բուրյոթութիւնը երջանակագրութեան ձեւ էր 3-ը, որովհետեւ զա էր խորհրդանշանը Նորին Մեծութեան Միջակութեան: Լաւագոյն անտառի նմոյշը... դաղուն էր: Արուեստագէտի ստեղծագործությունը նմանուել էր թուարանական խղիլ լուծող աշակերտի գործի: Սնդրագրքի վերջում տրուած էր խղիլի պատասխանը. արուեստագէտը գործն էր ամէն ինչ անել, որպէսզի ստացուի նախապէս տըրուած պատասխանը: Մինչդեռ արուեստագէտը աշակերտ չէ, այլ մարմնատիրուկոս, որ ինքն է նորանոր խղիլները կազմում: Ամէն ինչ արուած էր, որ բանաստեղծութեանը դառնայ պատրաստի պատասխան նախապէս տրուած հարցի: Իսկ մեր այն ժամանակուայ վեպերի ճնշող մեծամասնութիւնը. դրանք անպատճառ պիտի վերջանային այնպէս, ինչպէս Ս. Գիրքը Յայտնութեամբ և Ահեղ պատաստանով, շարերը պիտի պատժէին, բարիները... պարզեատորէին:  
(Շար. 5)

(Շար. Ա. էջ 15)

զաղրական եւ ժամանակակից ժողովրդական ստեղծագործութիւններուն, հայ երգահաններու երգերուն:

Ընդհանուր առմամբ մշակութիւն օջախներուն աշխատանքը աշխուժացած է, կապերը սերտացած են Հայաստանի համապատասխան կազմակերպութիւններուն հետ: Կը ստանան դիւրեք, երաժշտական գործիքներ, զգեստներ եւլն: Մշակութիւն տունը կը կառուցուին Հայրութի, Մարտակերտի, Մարտունիի մէջ: Յառաջիկային կը սկսի նաեւ Ասիերանի մշակութիւն տան, Ստեփանակերտի մշակութիւն տան - մարզական համալիրին շինութիւնը:

\*\*\*

ԼՈՒԾՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՐՑԻՆ

Անիի Մարալ աւանի անհատական եւ պետական բնակարաններու շինարարութիւնը լայն թափ ստացած է. դանդաղած է դիւրեքու լըումը. շատեր կը վերադառնան, նոր տուն կը կառուցանեն: Նոր շէնքերու թիւը բարձր է յատկապէս Իսահակեանի, Երեւակեանի, Բագրաւանի, Ջրափի դիւրեքուն եւ աւաններուն մէջ: Միայն Ստանդարտ դիւրեք 40 բնանիւք փոխադրուած է նոր բնակարաններ: Երջանի դեկափարներուն համաձայն, բնակչութեան տուն ապահովելու խնդիրը կարելի է ծրագրուած է 7 տարի կանուխ կարգադրել:

\*\*\*

ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻՒ ՄԱՍԻՆ

Փրոֆ. Թադէոս Յակոբեանի «Մարալ-բաղաճ Անի» մենագրութիւնը հրատարակուած է. հոն հետազոտուած է Անիի դերը, որպէս գրեթէ հինգ դարու մշակութիւն, քաղաքական ու տնտեսական կեդրոն: Հեղինակը նկարագրած է հին ճարտարապետական յուշարձանները ուրոնք այսօր եւս մեծ հետքերը թողնելով կ'արթնան: Գիրքին կցուած են գունաւոր լուսանկարներ եւ քաղաքին յատկազօծերը:

\*\*\*

ԱՐԹԻԿԻ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

Նախարարաց Խորհուրդը հաստատած է Արթիկի զարգացման յատկազօծը, մինչեւ 2010 թուականին համար: Արթիկ կը զարգանայ որպէս արդիւնաբերական, մշակութային, վարչական եւ տնտեսական կեդրոն: Քաղաքը որ ծանօթ է շինանիւթերու արտադրութեամբ, պիտի ունենայ մեքենաշինական ձեռնարկութիւններ: Բընակչութիւնը կ'անցնի 30 հազարը: Երջանի բնակչութիւնը բարելաւելու համար կանաչապատման զարկ կը տրուի. կը ստեղծուին հանգստեան գոտիներ, անտառներ, պուրակներ:

\*\*\*

«ԿՈՄԻՏԱՍ» ՔԱՌԵԱԿԻ ՅԱՂՈՂՈՒԹԻՒՆԸ

Երեւանի «Կոմիտաս» քառասկզբ Շուէտի մէջ մասնակցած է սենեկային երաժշտութեան միջազգային փառատօնին: Հայաստանի ջութակահարները եօթը հարիւր տունէն ներքինի էր, այս անգամ զարեւելի տարածքներէն եւս:

մեր գտնած են նոր գեղեցիկ, ապա նաեւ ըմբոքովի պալատին մէջ, հինգ տարբեր ծրագրերով: Քառասկզբ երգիչներուն մասին մեծ գովեստով արտայայտուած են տեղական թերթերը: «Կոմիտաս» քառասկզբ աշխատակիցը համերգներ կ'ունենայ խորհ. կարգ մը քաղաքներ, յետոյ Գերմանիա, Պելժիա, Լիւքսանպուրկ:

\*\*\*

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՒԷՊ

Հին Յունաստանի նշանաւոր պատմաբան եւ իմաստասէր Պլուտարքոսի ժողովածուն լոյս տեսած է հայերէն թարգմանութեամբ «Հայաստան» հրատարակչութեան կողմէ: Հատորին մէջ արուած են մեկնաբանութիւններ ու «տրակտատներ ու երկխօսութիւններ» ու թարգմանութիւնները, ինչպէս նաեւ «համեմատական կենսագրութիւններ»ը: Վերջին շարժաններուն Հայաստան հրատարակուած են Հերոտոտոսի «Պատմութիւն»ը, Հոմերոսի «Իլիական»ը եւ «Ոդիսական»ը եւլն:

\*\*\*

ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԳՏԱՇՈՆ

Աշակերտներ հին, քաղաքացուած ձեռագիր յայտնաբերած են Հայաստանի հիւսիսակողմի Ստեփանաւան քաղաքի շրջակայքը: Քանի մը հարիւրամեակէ ի վեր քարայրին մէջ մնացած է աստղադիտութեան մասին այդ մատենը, որ արտադրուած է միջնադարեան դեղագրի մը կողմէ: Հետազոտողները կ'ենթադրեն որ այդ քարայրը ժամանակին եղած է ձեռագիր ընդօրինակելու վայր: Գտածոն յանձնուած է Մատենադարան:

\*\*\*

«ԳԱՌՆԻՆ Թ. - ԺԳ. ԳԱՐԵՐՈՒՆ»

Համբաւ Պետրոսեանի այս հատորը լոյս տեսած է 1500 տպաքանակով: Այդ դարերուն Գառնին Հայաստանի յայտնի դիւրեքապարհներէն մէկն էր ու այս մարզին մէջ կատարուած նման ուսումնասիրութիւններ մեծ կարեւորութիւն ունին Հայաստանի պատմութեան շատ մը հարցերը լուսարմելու համար: Հ. Պետրոսեան կը խօսի Գառնիի ոչ միայն տընտեսութեան ու մշակութիւն, այլեւ շինարարական սկզբունքներուն մասին, քրոնոլոգիայի աւանի պալատմունքի, վարչական եւ տնտեսական կառուցը:

Գառնիի մասին ամենահին ու ամէնէն հաւաստի աղբիւրը Մ. Խորենացիի «Հայոց Պատմութիւն»ն է: Այս բնակավայրին մասին հետաքրքրութիւնը աւելի կը մեծնայ միջնադարուն: Ուսումնասիրողներու կարեւոր ատաղձ կը կարճին դիւրեքապարհ ու շրջակայքի յուշարձաններուն վիճակը թիւնները: Անոնց ամէնէն հինը կը պատկանի Թ. դարու վերջերուն: Գառնիի պեղումները սկսած են 1907-ին Պաշտիկ վրդ. Գաղաթեանի կողմէ. 1909-ին նոյն գործին ձեռնարկած է Ն. Մառ: Ապա պեղումները վերսկսած են 1945-ին Բարդէն Առաքելեանի գլխաւորութեամբ ու կը շարունակուին: Յայտնաբերուած են բաւականաչափ գտածոներ պրոնզի դարէն մինչեւ ուշ միջնադար:

ՇՆՈՐՀԱՎԱԽԲ

Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ պայծառութեան համար հետեւեալներ Ազգ. Միութեան կը նուիրեն -

Խաղաղօրհնութեան առթիւ՝ Տիկին Փափազեան 1000 Ձր.:

Միքայէլեան, Տէր եւ Տիկին ձէպրայէլ եւ Ազատուհի Պահատուրեան 1000ական Ձր. : Այրի Տիկին Գոհար Ոսկերէջեան 500 Ձր. : Տէր եւ Տիկին Մանուկ եւ Հոսիսի մէջ Միքայէլեան, Պ. Սեպուհ Արզումանեան, Տէր եւ Տիկին Յովհաննէս Հաբէլեան 200ական Ձր. : Այրի Տիկին Արաքի Սաչատուրեան, Այրի Տիկին Շահնար Գրիգորով եւ Գապարեան 100ական Ձր. :

ECOLE MIXTE TEBROTZASSERE

RENTREE SCOLAIRE 1988-1989
Les inscriptions sont ouvertes depuis le 1er Juin
Maternelle : 3 niveaux
Primaire : CP CE1 CE2 (sous contrat d'état) CM1 et CM2
Secondaire : 6ème et 5ème.
Programme officiel de l'Education Nationale.
Cours de langue, d'histoire et de civilisation arméniennes.
— Ramassage scolaire — Cantine —
TEBROTZASSERE :
1, bd. du Nord, 93340 Le Raincy
Tél. : 43 - 81 - 01 - 72

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ Խաչի Պօմոնի «Նայիրի» մասնաձեռքը, կազմակերպած է շարժանկարի ցուցադրութիւն մը, Կիրակի, Հոկտեմբեր 16, ժամը 15-ին, Պօմոնի եկեղեցւոյ կից սրահին մէջ:
Կապոյտ Խաչի Պանէ՛ոյ - Քաջանի Հ. Իսահակեան մասնաձեռքի պարահանդէսը՝ Նոյեմբեր 5-ին:
Մանրամասնութիւնները յետագային:
ԿԱՊՈՑ ՆԱՉԻ Մարտիկի Լէօլա Սաւունի մասնաձեռքին երգահանդէսը՝ ՆՈՅԵՄԲԵՐ 12-ԻՆ, ԺԱՄԸ 21-ԻՆ
Փայլ տէ՛ քանկրէ՛ - յայտագիր՝ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼ ԵԱՆ

ԲԱՑԱՌԻԿ ՃԱՇ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Փրանսահայ Կապոյտ Խաչի Լիոնի Արաքի մասնաձեռքը կազմակերպած է ցերեկուան ճաշ մը, Սեպտեմբեր 4, Կիրակի օր, Լիոնի Ազգ. Տան սրահին մէջ, Լիւրանանէն Լիոն ժամանող երախներուն համար, որոնք, Ծ. Կ. Խաչի օգափոխութեան կայանին երրորդ կեցութեան շրջանը բողբոջել յետոյ, կը հիւրասիրուին շրջանիս Կապոյտ Խաչուհիներուն կողմէ:

Ընտիր ճաշացուցակ եւ դեղարուեստական ճոխ յայտագրի մը առընթեր՝ առիթը կը տրուի ծանօթանալու 11 հիւր երախներուն եւ անոնց վարիչին հետ:

Ուստի, փութացէ՛ք այժմէն իսկ ապահովել ձեր սեղանները, մինչեւ Օգոս. 31, Չորեքշաբթի իրիկուն, հեռաձայնով՝ ամէն օր, ժամը 19-էն վերջ 78- 75- 90- 30 կամ 78- 84- 07- 96 թիւերուն:
Ճաշագին՝ 100 Ձր.:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ
Ս. ՄԵՍՐՈՊ ԿՐԹԱՐԱՆԻ
Տ Ա Ր Ե Կ Ա Ն Պ Ա Ր Ա Հ Ա Ն Գ Է Ս
ՆՈՅԵՄԲԵՐ 26-ԻՆ

« Յ Ա Ռ Ա Ջ » ի ԸՆԹԱՑԻԿ ԱԶԳԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆԸ
Մահազդ 350 (415,10)
Հոգեհանգիստ 250 (296,50)
Շնորհակալիք 250 (296,50)
Հարսնիք, նշանաւ 300 (355,80)
Ծնունդ 300 (355,80)
Բոլոր ազգերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 18,60% ԹԷ՝ՎԷ՝Ա (տե՛ս փակագծի մէջ ընդհ. գումարը):
Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազգերու, մինչեւ մէկ քառորդ սիւնակ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8րդ (12-13 տող) մնացեալին:
Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, գիմել թերթին վարչութեան:

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ
ՕՐՈՒԱՆ ԵՕՍՔԵՐ
ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՅ ԳԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԵՐԸ ՅՐԱՆՍԱՑԵՒ ԻՄԷՋ ՍԿԻՁԲԷՆ Ի ՎԵՐ.
ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅԱՌԱՋ»
Գին 80 Ձր.
Թղթատարի Ծախքով՝ 90 Ձր. 90
ԳԻՄԵԼ --
ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ ԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
51, rue Monsieur Le Prince 75006 PARIS
Կամ՝
«ՅԱՌԱՋ»
Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՁԵՐ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
ՀԱՐԱՆԵԿԱՆ ՀՐԱԷՐ, ԹՈՒՌՑԻԿ, ՏՈՍՍ ԿԱՄ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԹՈՒՂԹԵՐ (ՀԱՇՈՒԵՑՈՅՑ, ՆԱՄԱԿ ԹՈՒՂԹ, ՊԱՀԱՐԱՆ, ԵՒԱՅԼԵՆ)
FAIRE-PART DE MARIAGE, BILLETS, PROSPECTUS, DIVERS TRAVAUX DE VILLE (TÊTE-DE-LETRE, FACTURES, ENVELOPPES, ETC.)
« Յ Ա Ռ Ա Ջ — HARATCH »
83, RUE D'HAUTEVILLE - 75010 PARIS
LES APRES-MIDI, DE 14 à 18 h. 30 SAUF SAMEDI ET DIMANCHE
ԳԻՄԵԼ ԱՄԷՆ ՕՐ, ԺԱՄԸ 14.00 - 18.30
ԲԱՑԻ ՀԱՐԱՄ ԵՒ ԿԻՐԱԿԻԷ
Խնամուած աշխատակից — Travail soigné

## ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

### Ա Ր Յ Ա Ն

ՆՈՐ 8ՈՅՑ

Չորեքշաբթի օր, բանի մը հազար հոգի համախմբուած են Ստեփանակերտի մարզային Պորճուրդի շէնքին առջև, ուր կը բացուէր խորհրդարանական նստաւարջանը:

Այս նոր ցոյցին մասին, մանրամասնութիւններ կը պահանջէր, բայց մամուլի գործակալութիւններու համաձայն հազարաւոր ցուցարարները անգամ մը եւս պահանջած են Արցախի կցումը Հայաստանի:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎԱՐՇԱՒԱՅԻ շրջանի պաշտօնական սենտիքներն ալ միացան գործադուլի շարժումին: Հակառակ անոր որ պահանջուեցին ուժերը «գործադուլի» մէջ չեն եւ յարգաբար կը պարզեն բանթողներու գրաւած աշխատավայրերը, ընդհանրապէս, բանթողներն ալ վճարական կը մնան եւ տեղի չեն տար: Եթե թիկնի մէջ է որ ամէնէն ծայրայեղ ընդդէմ տած էր շարժումը: Հոն, երիտասարդ քահանայ մը կը բացատրէ.— «Իրենց հաստը օստըցանցի, բայց իրենցմէ շատ աւելի կարեւոր բան մը սորվեցայ՝ քաջութիւնը»: Ապա, կը դառնայ դէպի բանթողները ու կ'ըսէ անոնց, որոնք կը պատրաստուին դէմ դնել պահանջութեան ուժերուն.— «Երբ աստանան մտեցան, իր խի լեզուով պատասխանեցէք, ըսէք իրենց ոտներէն «փաշոլ փո» (կորսուեցէք կամ Փրանսերէնով foutez-le camp): Հինգշաբթի առտու հասած լուրերու համաձայն, կարգ մը հանքերու մէջ, աշխատանքը վերականգնուած էր:

ԿԻՊՐՈՍԻ խոսակցութիւնները լաւ ճամբու մէջ կը թուին: Ժրենի մէջ, նախագահ Վառլիլու եւ «Նախագահ» Տէնքիւմալ փոխադարձ վստահութիւն արտայայտած են եւ ժամադրուած Նիկոսիա, Սեպ. 15-ին եւ 16-ին բանակցելու համար, կը գլխի վերաբերեցան մասին: Լուծումի պայմանագրով որոշուած է՝ 1989 Յունիս 1:

ՅՐԱՆՍԱՅԻ արտաքին առեւտուրի բացումը նոր մրցանիչ մը կ'ուրեց Յունիսին ՅԱ միլիոն Փրանքի բարձրանալով, 3,3% աւելի քան Յունիսին: Պատճառն այն է, որ Փրանսիական պարտքերը չեն ծախուիլ արտասահման: Ասիկա մտահոգ է Փրանսայի ճարտարարուեստի ապագային համար, քանի որ նոր գործադուլութիւններու դուռ կը բանայ: Ճարտարարուեստի մեծ գործատէր մը կը բացատրէ.— «Մեր հարցը հոն է, որ համաշխարհային մեծ Պետութիւն մը եղած ենք, հիացումի առարկայ, տէր գաղթատիրական կայսրութեան մը, որ ապրանքը կը հայթայթէր ցած գիններով եւ ոչ շատ բծախնդիր յաճախորդութիւն մը: Մեզի համար, Իտալացիները խնդիրը մարդիկ են (սիլո)», Զուլիցեթայցիները՝ դանդաղ, Գերմանացիները՝ հրահանգով քայլերով, Ամերիկացիք՝ մեծ մասնակցներ, ձափոնները՝ քամիքազներ: Իրականում մէջ, Իտալացիք ճարտարարուեստի նուիրուած են, զեղեցիկի գիտակցութեամբ, Զուլիցեթայցիք՝ ճշգրտապաշտ են,

Գերմանացիք՝ ամէն մէկ մանրամասնութեան մտահոգութիւնն ունին, Ամերիկացիք ծրարումի արուեստին տէր են, ձափոնցիք կատարելի եւ յաճախորդին հանդէպ քաղաքավարութեան բծախնդրութիւնն ունին: ԵՄ'նք շատ ետ ենք:

ՆԱԽԱԳԱՆ ՄԻՔԵՐԱՆ մասնաւոր գոյեւտով արտադրողացու իր նախարարացեւորին մասին, հասանարար քիչ մըն ալ «տեղը դնելու» համար, Ազգ. Ժողովի նախագահը՝ Լորան Ֆապիլիս, որ հարցադրոյցի մը ընթացքին Մանտրի, մեղադրած էր Ռոբարի կատարութիւնը, որ «մեծ տեսական» չունի: Միթերան, անկասկած, այն տպաւորութիւնը ունեցաւ թէ քարը իրեն ալ կ'երթայ (չառ հեռու չէ այն օրը, երբ նախարարացեւոր Ֆապիլիս կ'ըսէր.— ինք՝ ինք է, ես՝ ես եմ...) եւ չեղտեց թէ որքան դժուար է կատարուածէն, գլխաւորաբար նոր-Բալեանիոյ համար: Ենթահարցէ նաեւ Ռոբարի տարեկարծը (58 տարեկան եղաւ, Օգոս. 23-ին):

ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ ՌՈՒՔԱՐ Նուժէա մեկնելէ առաջ, Չորեքշաբթի օր, այցելեց Կառչի հիւանդանոցը ուր են առաւելաբար կառքի արկածներու զոհերը: Ռոբար եւ իր կատարութիւնը վճարած են շատ աշխուրջ ըլլալ ճամբու արկածներու նկատմամբ, որոնց եւրոպական մրցանիչը կը կտորէ Փրանսա: 1987-ին վիրաւորներու թիւը 77.735-էն 88.098-ի անցած է (+10,8%), մեռելայինութիւնը՝ 15,9% յաւելում կրած է 4973 զոհերով եւ ծանր վիրաւորներու թիւը հասած է 28.026-ի: Միայն Յունիս 29-էն 31 էր «յուլիսեան» եւ «օգոստոսեան» գիրքը կը խաչածէին, այս տարի մեռելայինութիւնը 135 եղած է (անցեալ տարի՝ 79): Գլխաւոր պատասխանատուն կը նկատուի արագութիւնը: Ճամբու ապահովութեան տեսակէտով առաջին կը դասուի Հոլանտա, իրեն կը յաջորդեն Մեծն-Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Դանիա եւ Լիւքսեմպուրգ:

ԻՐՁԻՆՃԱՆԻ զինուորական դատարանը Տեւ — Նոյ (յեղափոխական ուղի) ծայրայեղ ձախ շարժումի ութ անդամները մահուան դատապարտեց, այն ամբաստանութեամբ որ «ուզած են Մարքս-լենինիստ Պետութիւն մը հիմնել»: Միւս կողմէ, Անգարայի մէջ, վերականգնուած է Մարկընի եւ Քուլտուի քանիցս ընդհատուած դատաւարութիւնը: Այս ճորջ նիւսին Կիոն մամուլի գործակալութեան մէկ լրագրողը ձերբակալուած է:

Ժ. Փ. ՍՈՒՍՈՆ, աշխատանքի նախարարը յայտարարեց թէ գործադուրկերու թիւը 100-էն 150 հազար պիտի աւելնայ մինչեւ տարւոյն վերջ: Ռոբար, աւելի յոռետես եղած էր Մայիսին, 250 հազար նկատելով նոր գործադուրկերու թիւը:

ՓՐՈՑ. ԵՎԱՐՇԱՊԵՐԿ, որ ծանօթ է իբրեւ Անտաքիի անձնաւորութիւն մը եւ որ շատ կարճ ժամանակով ենթանախարար եղաւ Ռոբարի կատարութեան իր «արկածային գործիւնը» կը պատմէ հատորով մը, որ հրատարակ կ'ելլէ Սեպ. 7-ին: Եվարցիակի կ'ամփոփէ կատարական իր փորձառութիւնը, ոչնչուելով Նափոնիսի խօսքը՝ «քաղաքականութեան մէջ, տեղի ու համար՝ լայն մը չընէր»: Ծանօթ է որ «անփորձ» քաղաքագէտ, խլիբազէտը քիչ մը շուտ եւ քիչ մը շատ խօսած էր եւ պարզած

## ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻՋ ՀԵՌՈՏԻՊ

ԵՐԵՒԱՆ

(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՕԳՈՍՏՈՍ 17 / 23)

### ՍՈՒՄԳԱՅԻԹ

(ԹԱՍ-ի ԹՂՔԱԿԻՑԷՆ)

Սուժգայիթի զանգուածային անկարգութիւններուն առնչուած դատաւարութիւններ տեղի ունեցած են արդէն, որոնք որոշած են թէ ով, որքան մեղաւոր է. տրուած են արդարացի դատաւարութիւններ: Գնտուցիւնները կը շարունակուին. ներկայիս փորձառու քննիչներ, քրէագէտներ, բժիշկներ, հոգեբաններ Սուժգայիթ կը գտնուին ու մանրազնին կը վերլուծեն ինչ որ տեղի ունեցաւ Փետրուարին: Այդ խումբը կը զըլխաւորեն Պորճ. Միութեան դատախազութեան գլխաւոր քննիչական վարչութեան պետի տեղակալ Վ. Նեւաշեւ, գլխաւոր դատախազին առնիթեր յատկապէս կարեւոր գործերու քննիչ Վ. Գալիկին: Մենք հանդիպում ունեցանք Պորճ. Միութեան գլխաւոր դատախազի տեղակալ Ալ. Կատուսեւի հետ:

Հ.— Ձեր կարծիքով, ի՞նչ բան նախորդեց Սուժգայիթի իրազարմութիւններուն. անոնք կ'առընչուին արդեօք Լեւոնալիս Դարաբաղի իրազարմութիւններուն: Կը խնդրեմք որ ներկայացնէք մասնաւորապէս այդ օրերու ժամանակագրութիւնը:

Պ.— Անկասկած, ինչ որ պատահեցաւ Սուժգայիթ, շատ սերտօրէն կապուած է Լեւոնալիս Դարաբաղի ինքնավար մարզի իրազարմութիւններուն հետ: Փետ. 22-ին ԼՂԻՄ-ի մէջ սկսած զանգուածային անկարգութիւնները, որոնք հրահրուած էին ազգայնական տրամադրութիւններ ունեցող տարրերու կողմէ, չի կացուցին մըթնոլորտը Սուժգայիթի մէջ, որ Ազրբեյջանի արդիւնաբերական մեծագոյն կեղերներէն մէկն է: Հիմա մենք ստույգ պարզած ենք ու քաղաքի խզուծութիւնները անսկզբունքաբար էին խուլիկան տարրերը, օգտուելով ծայրաստիճան լարուած իրազարմութիւնէն, յոյզերու եւ կըրքերու բորբոքումէն, ԼՂԻՄ-ը Հայաստանին կցելու պահանջներուն առնչութեամբ ամէն կարգի յերիւրանքներէն: Հակիրճաւորական գործողութիւններու բեմը ջրուած են անկայուն, ոչ հասուն մարդիկ, դեռահասներ:

Փետ. 27-ին Լեւոնալիս հրատարակի վրայ:

Իր ծրարիչները նախքան զանոնք կատարութեան ենթարկելը:

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԻՆՆ ալ սկսած է իւրացնել արեւմուտքի բարեբեր, մասնաւորապէս արտուր կարգուած կը դրամատիրական վարչակարգի մը: Այսպէս Ֆուլիպի միջազգային խաղաղող Չաւարով, որ Կիւեի Դիմադրական անգամ է պայմանագրութեամբ (երեք մարզաշրջանի համար) կ'անցնի Թորինտի ձուլվեցիւթուսին: Փոխանցումը վճարուած է հինգ միլիոն տուրք, որու մէկ միլիոնը կը պահւի խորհրդ. Պետութիւնը, 2-ը՝ մարզական նախարարութիւնը, 2-ն ալ՝ Դիմադրական Գալով Չաւարովի ամսական 7800 Ֆր. պիտի ստանայ միայն, որպէս աշխատակարար:

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ՆԱԽԱԳԱՆՈՒԹԻՒՆԸ

Ձեռքով շինարարութեան գործերու պետական կոմիտէն, Հայաստանի շինարարութեան արդիւնաբերութեան նախարարութիւնը եւ շինարարութեան նախարարութիւնը, հաստատած է պետական շինարարական կոմիտէ: Այս կոմիտէին նախագահ նշանակուած է Օգոս. 15-ին նախարարաց Պորճուրդի նախագահ տեղակալ Վարդգէս Արծրունի:

Վ. Արծրունի ծնած է 1941-ին Կիւլուվուզ (Ռուսաստան). աւարտած է Տոլյատի (Ռուսաստան) թէքնիքական Հիմնարկը: 1966 - 69 աշխատած է Տաշքենդ որպէս գլխաւոր ճարտարապետ: Ապա շինարարական մարզին մէջ վարչական պաշտօններ վարած է մինչեւ 1979. այդ թուականէն մինչեւ 1987 եղած է Մոսկուայի բնակարանային շինարարութեան պետական միւլտորանի պետ, իսկ 1987-էն Հայաստանի նախարարաց Պորճուրդի նախագահ տեղակալ: Հայաստանի Գերագոյն Պորճուրդի երեսփոխան է:

Հոն ամբողջ հաւաքուած է. գլխաւորաբար երիտասարդներ: Սկսած են հնչել Հայկերու վրայ յարձակելու կոչեր: Ի հարկէ եղած են նաեւ բանի, Փիլիքիական գործողութիւններու դէմ առարկուելը: Բայց յաղթած են անսկզբունք ճառախօսներու ազգայնական լողունները: Երիտասարդներու խումբերը քաղաքի տարբեր շրջաններուն մէջ սկսած են կոտորուել խանութներու ցուցափեղկերը, ծեծել հայ քաղաքացիները: Պուլիկանութիւնը զաղբեցնելու քաղաքագործի աշխատողներուն պահանջը անպատասխան մնացած է: Յաջորդ օրը, Փետ. 28-ին, իւրազարմութիւնները հասած են իրենց գագաթնակէտին: Հասարակական կարգի խախտումները յատկապէս շարմիր ընդդէմ տած են: Ազրբեյջանցիներու խումբերը մահակներով, քարերով, այլ առարկաներով զինուած սկսած են յարձակել Հայերու թաղամասերու վրայ, բնութեան դաժան գործողութիւններ կատարած, փճացուցած ստացուածք: Ինչպէս կարելի եղած է պարզել քննութեան ընթացքին, հրահրիչներուն մէջ գտնուած են նաեւ քանիցս դատուած անձեր:

Հետեւանքները ծանօթ են. զոհուած են 32 հոգի, որոնց 26-ը՝ Հայ: Տակնու վրայ եղած է մօտ 200 բնակարան, աւերուած ու հրկիզուած է 50-է աւելի հաստատութիւն, զմաստուած են քանի մը հանրակառք ու ինքնաշարժեր: Սանձարձակ ամբողջ, խանդարելով քաղաքի հասարակայնի վարդի պահանջներուն ծառայութիւնը, քարկոծած է զինուորական ծառայողները, քաղաքագործի պաշտօնեաները: Այդ կացութեան մէջ զոհուած են վեց Ազրբեյջանցիներ: Ներքին գործերու բաժնիներուն աւելի քան 100 աշխատակիցները եւ զինուորական ծառայողներ զանազան աստիճաններով վիրաւորուած են:

Մինչեւ Մարտ 1 կարելի եղած է կասեցնել անկարգութիւնները: Իրազարմութիւններու շատ մանրակրկիտ հետաքննութեան շնորհիւ ձերբակալուած են 94 հրահրիչներ ու մասնակիցներ. բոլոր միջոցները ձեռք առնուած են պարզելու:

(Շար.ը Գ. էջ)

# ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՊԱՀԱՆՋ՝ ԸՆԴԴԷՄ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Գրեց՝ ՓՐՈՑ. ՌԱԶՄՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ

Իմ առջև դրուած նպատակին հասնելու միակ խոչընդոտն իմ մէջ է:  
Մ. ԿԱՆՏԻ

Ստորև ծանօթ մտաւարկան Ռաֆայել Իշխանեանի մէկ խոսովից գրութիւնը, ուր հայ գիտնականը ահագնազ կը հնչեցնէ ի տես Հայաստանի պետական հաստատութիւններէն ներս նահանջող հայերէն լեզուին, որ նոյնպէս կը բացակայի փողոցի ցուցատախտակներէն սկսեալ մինչեւ քաղաքներու եւ շարժակարի տուներու վրայի արձանագրութիւններուն մէջ:

Աշխարհի աւելի քան 400 լեզուներէ կը բաղկանային եւ յարգանքի է արժանի: Հայերէնն էլ բացառութիւնն է: Եւ ամէն լեզու նախ յարգում է այդ լեզուի տէրը՝ հանդիսացող ժողովրդի կողմէից, այլապէս ուրիշներ կողմից չի յարգուի: Հայոց լեզուն էլ, պարզ է, նախ մենք՝ Հայերս պէտք է յարգենք: Նաեւ՝ պահպանենք: Ի՞նչպէս է մի ժողովուրդ իր լեզուն յարգում ու պահպանում: Գործածելով դրուած ու բանաւոր: Առանց դրա ոչ յարգանք կայ, ոչ պահպանում: Եւ ժողովուրդը որքան շատ է գործածում իր լեզուն, որքան շատ որդորներում է գործածում, այնքան շատ է յարգում ու պահպանում իր լեզուն: Այս տեսանկիւնից, պարզ է, որ սեփական ազգային լեզուի հասցէին սեւէ մէկը շտապում դժուարները դատարկ խօսքեր են, եթէ նա չի գրում ու չի խօսում, գաւազներին չի կրթում այդ լեզուով:

Ժողովուրդներ կան, որոնք գոյութիւն ունեն իրենց լեզուով: Իրանցից ենք մենք՝ Հայերս: Հայ ժողովուրդ հանած Հայոց լեզու, չկայ Հայ ժողովուրդ: Այս է պատճառը, որ Մ. Նալբանդեանն ու Վ. Տէրեանը մեր ազգի հոգին համարում էին մեր լեզուն, իսկ Իսահակեանն ուղղակի ասաց. «Մեր հայրենիքը մեր լեզուն է, Հայաստանն նշանակում է Հայոց լեզու»: Սա պարզից պարզ թուարանութիւն է: Աւելին, Հայ ազգային արուեստն ու մշակութիւնը՝ գրականութիւնը, երաժշտութիւնը, կերպարուեստը, ճարտարապետութիւնը, սիւրսոփայութիւնը եւ այլն պայմանաւորուած են Հայոց լեզուով, Հայոց լեզուամտածողութեամբ: Առանց որի չկան դրանք: Ուրեմն, Հայ ժողովուրդի մէջ որքան պահպանում է հայերէնը, դառնում է արուեստը հայոց ազգային լեզունը, այնքան պահպանում է Հայ ժողովուրդն ու Հայաստանը:

Հիմա այս պարզ ճշմարտութեամբ զննուած, նայենք մեր առօրեային: Սկսենք աւտոկայաններից՝ Հայաստանի միջընդարձակում եւ միջգիւղական փոխադրականների մեծագոյն մասը հայերէն ցուցանակ չունեն: Այսինքն Երեւանում գտնել Հայերէն ցուցանակ ունեցող երթուղային թաքսի: Զո՛ւր ջանքեր: Այսցենք մեր հիմնարկութիւնները՝ սկսե՛ք Կոմիտասի պողոտայում իրար կողքի կանգնած չորս բարձրադասի հսկայ շէնքերից: ամէնուրեք հայերէնը վտարուած է, նոյնիսկ դրանի ցուցանակներում հայերէն տառ չէ՛ք գտնի, եւ միայն շէնքերից մէկը երեք սենեակում մեզուպեան տառերի կը հանդիպէք («Գիտութիւնն եւ տեխնիկան» ամսագրի խմբագրութիւն), եւ դատուով վերջապէս կ'իմանաք, որ Հայաստանում էք, այնպէս, ինչպիսի պուտեխնիկական հսկայ հիմնարկում ճարտարապետութեան բաժինն մեզ յիշեցնում է, թէ որտեղ ենք գտնուած: Իսկ մեր միջնարկութիւնների, պետական կոմիտէների մեծ մասում, հաշուի կենտրոններում, գործարանների մեծագոյն մասում, ազգաբնակչի բնագոյնական հիմնարկներում, հիանդանոցներում անընդհատ շատացող համագործակցականներին զգալի մասում, վատիշների եւ այլ իրերի նորոգման կրպակների շատ ցուցանակներում, Հայաստանի արդիւնաբերութեան տարբեր արտադրանքի շատ

ու շատ պիտակներին եւ այլն, չէ՞ որ մշտնջենական տարբերակներ երեւոյթ է կամ բնաւ գոյութիւն չունի: Իսկ հայերէն հեռախօսայանակի մասին վաղուց մոռացել ենք:

Երեւանի հիմնարկներից պետական արխիւի ստացած փաստաթղթերի շուրջ 95 տոկոսը հայերէն չէ. դա Երեւանի պաշտօնական ներքին գրագրութեան պատկերն է:

Հայաստանում չկան կրթութեամբների հայերէն տպուած տոմսեր: Այդ հարցով երեք հոգով՝ սողերին հեղինակը, մի քանի փոստ եւ մի ներքին, գիտնական կիրմն-մատոցապիտակի պետական կոմիտէի նախագահի անդալիսին:

- Ինչո՞ւ Հայաստանի կրթութեամբներում հայերէն տպուած տոմսեր չկան: Պատասխանեց.
- Բա ի՞նչ էք ասում:
- Որ հայերէն տոմսեր լինեն:
- Ոչ մի Հանրապետութիւնում իրենց լեզուով կրթութեամբ չկան:

Ես ցոյց տուցի էստոնիայից, Լատուիայից, Լիտուայից, Ուկրաինայից, Ազրբեյջանից բերածս կրթութեամբը բոլոր տեղի ազգային լեզուներով տպուած: Տեղակայի ասաց.

- Նրանք նայելուց արտ էն:
- Նոյն հարցով զիմեցիք օփերայի տնօրէնին (այն ժամանակ քնկ. Չեքիզեանն էր).
- Ինչո՞ւ Հայաստանում օփերայի տոմսերը հայատառ չեն:

Պատասխան.

- Հայերէն տոմսերը չեն յարմարում մեր տոմսերի մէջ:
- Իսկ վրացերէն տոմսերը:
- Նոյնպէս չեն յարմարում:

Ցոյց տուցի Թրիլիսից բերածս վրաց օփերայի տոմսը՝ վրացատառ: Եւ ասացի, որ եղածս Հանրապետութիւններում, (Մերձպարթեան, Ուկրաինա եւ այլն) նոյնպէս օփերայի տոմսերը ազգային լեզուներով տպուած են տպուած: Տնօրէնի վրայ ազդեցութիւն չթողեց:

Այսպիսի դէպքերում, երբ ասում են, որ քառ Հայաստանի Սահմանադրութեան 72-րդ յօդուածի, այստեղ պետական լեզուն հայերէնն է, կամ դարձում են, կամ ներդրումիտ ժպտում (այսինքն, դա ի՞նչ նշանակութիւն ունի):

Անհասկանալի է, մի՞թէ հնարաւոր չէ ստեղծել մի օղակ, մի խորհուրդ, ընդամենը երեք-չորս մարդուց բաղկացած, որը հսկի Հայաստանում գտնէ ցուցանակներ, յայտարարութիւնների, տոմսերի մէջ պետական լեզուի օրէնքը պահպանելուն:

Ի հարկէ, սեփական ազգային լեզուի նկատմամբ այս, մեղմ ասած, անտարբերութիւնը Հայերս ներքում արժանաբեր ունի, դրա արտայայտութիւնն են թէկուզ մեր անձնական ստորագրութիւնները, բնակարանների ցուցակները, ծոցատետրերի գրանցումները, տրոնք մեծ մասամբ հայերէն չեն: Կամ զանգահարեցէք Երեւանեան պատահարը ընտրուած հեռախօսային 10 համարով, դրանցից միայն մէկը, առաւելագոյն երկուսը հայերէն այդ կամ լուռ եմ կ'ասեն:

Կենտրոնական թերթերը վերջերս շատ են գրում ազգային լեզուների խնդիրների մասին: Օրինակ, 1987 թ. Մայիսի 7-ին «Պարզասէն» գրեց, որ Հայաստանում Հայոց լեզուի գործածման շրջանակը գնալով նեղանում է (պարզ է, թէ շրջանակի նեղանալը վերջում ինչի է յանգում), «Իզվեստիան» 1987 թ. Մայիսի 15-ին գրեց, որ ազգային Հանրապետութիւնում բնակչուց այդպիսիները պէտք է սովորեն ու իմանան տեղի ազգային լեզուն (մենք գո՛հ լինենք, եթէ մեր Հանրապետութիւնում բնակչուց եւ հայերէնը չգործածող տասնեակ հազարաւոր

Հայերը սովորեն ու դործածեն իրենց ազգային լեզուն), նման հարցերի մասին յատկապէս շատ գրուեց «Լիտերատուրնայա Կաթէթա»-ում: Ուզում եմ ընդել այդ թերթի 1987 թ. թիւ 10-ից մի քաղաքէք. «Իր երկրի նկատմամբ իսկական սէր չի կարող լինել առանց իր լեզուի նկատմամբ սիրոյ գոյութեան: Այն մարդը, որ անտարբեր է իր ազգային լեզուի նկատմամբ, վայրենի է: Նա փնտասկար է իր բուն էութեամբ, որովհետեւ նրա անտարբեր վերաբերմունքը լեզուի նկատմամբ բացարձակ է իր ժողովրդի անցեալի, ներկայի եւ ապագայի նկատմամբ նրա ունեցած լրակատար անտարբերութեամբ»:

Իսկ Այ. Մխանթկեանի՝ կարգադրութեամբ «Սորհրդային Հայաստան» պաշտօնաթիւերը 1921 թ. Յուլիի մէկէն հրատարակեց առաջնորդով «Անյետաճրգելի պահանջ» վերնագրով (հասանաբար իր՝ Այ. Մխանթկեանի գրածը), որտեղ կտրական պահանջ էր դրում Հայաստանի հիմնարկներում ներքին գործերը վարել պետական լեզուով՝ հայերէն: Յօդուածում կան նաեւ այսպիսի տողեր. «Հայաստանը Հայ աշխատանքների, Հայ ժողովրդի Պետութիւնն է: Եւ այստեղ պետական լեզուն հայերէնն է: Նա, ով չի ցանկանում այդ ըմբռնել, ով դիտարկութեամբ խուսափում է գործածել հայերէնը պետական հիմնարկութիւնների մէջ, իրապէս վարում է հակադեմոկրատիկ մի գործ: Նա, ով չի կարող համակերպուել մեր Պետութեան այդ պահանջներին, կարող է հեռանալ երկրից»:

Ի հարկէ, Հայոց լեզուի վտարումը մեր շատ հիմնարկներից, ցուցանակներից, տոմսերից, տասնեակ հազարաւոր Հայ ընտանիքներից, մենք ինքներս՝ Հայերս ենք անում, եւ ոչ ոք չի չմեղադրենք, կան յիշածս Հանրապետութիւններում ազգային լեզուն պահպանելու շատ դրական օրինակներ:

